

## ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐ

### ՔՐԵԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՎԱԿԱՆՈՐԴՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ (ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ)

Ա) **Մովսես Ադամյանին** ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 3-րդ մասի 1.1-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «նա, նախնական համաձայնության գալով Բաբկեն Գալստյանի հետ՝ խնդրել է վերջինիս պատկանող Վազ 2121 («Նիվա») մակնիշի ավտոմեքենայով իրեն տանել Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղում գտնվող՝ Վարդան Բալյանի առանձնատուն: Բ.Գալստյանը սպասել է առանձնատանից մոտ մեկ կիլոմետր հեռավորության վրա կանգեցրած իր մեքենայի մեջ: Մ.Ադամյանը կոտրել է առանձնատան դուռը, մտել ներս և գողություն կատարել: Այնուհետև գողոնը ձեռքին՝ մոտեցել է Բ.Գալստյանին, ով իրեն և գողացված իրերը տեղափոխել է Տավուշի մարզի Մովսես գյուղ, որի հետևանքով Վարդան Բալյանին պատճառվել է խոշոր չափերի հասնող, ընդհանուրը 700.000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի նյութական վնաս»:

Բ) **Բաբկեն Գալստյանին** ՀՀ քրեական օրենսգրքի 38-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «նա 2014 թվականի հունվարի 16-ի լույս 17-ի գիշերը իրեն պատկանող Վազ 2121 («Նիվա») մակնիշի ավտոմեքենայով Մովսես Ադամյանին օգնել է Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղում գտնվող՝ Վարդան Բալյանի առանձնատանից գողացված իրերը տեղավորել Տավուշի մարզի Մովսես գյուղ, որի հետևանքով Վարդան Բալյանին պատճառվել է խոշոր չափերի հասնող, ընդհանուրը 700.000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի նյութական վնաս»:

### ԱՄԲԱՏԱՆՅԱԼՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

**Բաբկեն Ռոմանի Գալստյան**՝ ծնված 20.09.1983թ., ամուսնացած է, ունի երկու անչափահաս երեխա, նախկինում դատված չի եղել:

**Մովսես Տիգրանի Ադամյան**՝ ծնված 15.08.1980թ., ամուսնացած է, ունի երկու անչափահաս երեխա, նախկինում մեկ անգամ դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով (դատվածությունը հանված և մարված չէ):

### ԳՈՐԾԻ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

2014 թվականի հունվարի 20-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Գեղարքունիքի մարզի քննչական բաժնի Սևանի քննչական բաժանմունքում հարուցվել է թիվ 42100214 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 3-րդ մասի 1.1-րդ կետով: 2014 թվականի հունվարի 21-ին ձերբակալվել է Բ.Գալստյանը: 2014 թվականի հունվարի 23-ին Բ.Գալստյանը ներգրավվել է որպես մեղադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով: Բ.Գալստյանի նկատմամբ նախաքննության մարմնի 2014 թվականի հունվարի 26-ի որոշմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին: Նույն օրը Մ.Ադամյանը որպես մեղադրյալ է

ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով: Առաջին ատյանի դատարանի որոշմամբ Մ.Ադամյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Քրեական գործը մեղադրական եզրակացությամբ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում ստացվել է 2014 թվականի հունիսի 25-ին: Մեղադրյալների նկատմամբ կիրառված խափանման միջոցը թողնվել է անփոփոխ:

## **ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ**

**Մեղադրյալ Բաբկեն Գալստյանի ցուցմունքն** այն մասին, որ 2014 թվականի հունվարի 16-ին Մ.Ադամյանը խնդրել է իրեն՝ որպես տաքսու վարորդ, տանել Անտառամեջ գյուղ: Քանի որ գումարի կարիք շատ է ունեցել, համաձայնել է հունվարի 16-ի լույս 17-ի գիշերը իրեն պատկանող «Նիվա» մակնիշի ավտոմեքենայով Մ.Ադամյանին տանել Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղում գտնվող՝ Վարդան Բալյանի առանձնատուն: Երբ մոտեցել են առանձնատանը, Մ.Ադամյանը տնից մոտ մեկ կիլոմետր հեռու պահանջել է կանգնեցնել մեքենան և սպասել, մինչև ինքը կխոսի Բալյանի հետ և հետ կվերադառնա: Մոտ կես ժամ անց նա վերադարձել է՝ ձեռքին երկու տոպրակ: Այն հարցին, թե ի՞նչ է այդ տոպրակների մեջ, Ադամյանը պատասխանել է, որ հետո կհայտնի: Ավտոմեքենան նստելուց և որոշ տարածություն անցնելուց հետո Ադամյանն իրեն հայտնել է, որ դրանք գողացված իրեր են: Ինքը կտրուկ արգելակել է ավտոմեքենան և խնդրել Մովսեսին դուրս գալ ավտոմեքենայից: Իսկ երբ Ադամյանը առաջարկել է իրեն վերցնել գողացված իրերի մի մասը, ինքը համաձայնել է տեղափոխել Ադամյանին: Մովսեսը իրեն հայտնել է նաև, որ Բալյանի տանից դուրս գալիս հնարավոր է, որ իրեն նկատել են: Իսկ ինքը, վախենալով, որ իրենց կարող են բռնել՝ շարունակել է վարել իր ավտոմեքենան՝ Ադամյանին և գողացված իրերը տեղափոխելով Տավուշի մարզի Մովսես գյուղ, ապահով տեղ: Բ.Գալստյանը հայտնել է նաև, որ Մովսեսը իրեն է տվել գողացված իրերից մեկ ծաղկաման և մեկ հեռախոս:

**Մեղադրյալ Մովսես Ադամյանի ցուցմունքն** այն մասին, որ 2014 թվականի հունվարի 16-ին Բ.Գալստյանի հետ նախնական համաձայնության է եկել, որ վերջինս իրեն կտանի Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղում գտնվող՝ Վարդան Բալյանի առանձնատուն: Հունվարի 16-ի լույս 17-ի գիշերը խնդրել է նրան՝ որպես տաքսու վարորդ, իրեն տանել Անտառամեջ գյուղ: Բ.Գալստյանն իրեն պատկանող «Նիվա» ավտոմեքենայով Մ.Ադամյանին տարել է Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղում գտնվող՝ Վարդան Բալյանի առանձնատան մոտ: Ինքը խնդրել է Բաբկենին իրեն սպասել Բալյանի տանից մոտ մեկ կիլոմետր հեռավորության վրա: Մոտ կես ժամ անց նա վերադարձել է՝ ձեռքին երկու տոպրակ: Գալստյանի այն հարցին, թե ինչ է տոպրակների մեջ, ինքը պատասխանել է, որ հետո կասի: Ավտոմեքենան նստելուց և որոշ տարածություն անցնելուց հետո ինքը Գալստյանին հայտնել է, որ դրանք գողացված իրեր են: Գալստյանը կտրուկ արգելակել է ավտոմեքենան և խնդրել իրեն դուրս գալ ավտոմեքենայից: Իսկ երբ ինքը Գալստյանին առաջարկել է վերցնել գողացված իրերի մի մասը, վերջինս համաձայնել է տեղափոխել իրեն: Ինքը Բաբկենին հայտնել է նաև, որ Բալյանի տանից դուրս գալիս հնարավոր է, որ իրեն նկատել են: Իսկ Բաբկենը, վախենալով, որ իրենց կարող են բռնել՝ շարունակել է վարել իր ավտոմեքենան՝ Ադամյանին և գողացված իրերը տեղափոխելով Տավուշի մարզի

Մովսես գյուղ, ապահով տեղ: Ինքը Բ.Գալստյանին է տվել գողացված իրերից մեկ ծաղկաման և մեկ հեռախոս:

**Տուժող Վ.Բալյանի ցուցմունքն** այն մասին, որ իր տնից ընդհանուր 700.000 (յոթ հարյուր հազար) դրամ արժողությամբ երկու ծաղկաման, երկու հեռախոս և մեկ ոսկյա ապրանջան է գողացվել:

**Իրեղեն ապացույց ճանաչված երկու հեռախոսները, երկու ծաղկամանները և ոսկյա ապրանջանը:**

**Դատաապրանքագիտական փորձաքննության եզրակացությունը՝** համաձայն որի փորձաքննության ներկայացված երկու ծաղկամանների, երկու հեռախոսների և ոսկյա ապրանջանի ընդհանուր արժեքը կազմում է 700.000 (յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, մասնավորապես՝ հեռախոսներից յուրաքանչյուրը գնահատվել է 100.000 ՀՀ դրամ, իսկ ծաղկամաններից յուրաքանչյուրը՝ 50.000 ՀՀ դրամ:

## **ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ**

Մեղադրյալ Բ.Գալստյանը, և տուժող Վ.Բալյանը պնդել են իրենց նախանախաքննական ցուցմունքները:

Մեղադրյալ Մովսես Ադամյանը ցուցմունք է տվել, որ Բ.Գալստյանը նախապես գողության մասին տեղյակ չի եղել: Մնացած մասով պնդել է իր նախաքննական ցուցմունքները: Դատարանում հետազոտվել են նաև իրեղեն ապացույցը և դատաապրանքագիտական փորձաքննության եզրակացությունը:

## **ՀԱՐՑԵՐ**

### **ՀԱՐՑ 1**

Արդյոք ճիշտ է որակվել մեղադրյալ Մ.Ադամյանի արարքը: Հիմնավորե՛ք պատասխանը:

### **ՀԱՐՑ 2**

Արդյոք ճիշտ է որակվել մեղադրյալ Բ.Գալստյանի արարքը: Հիմնավորե՛ք պատասխանը:

### **ՀԱՐՑ 3**

Համեմատեք վերոշարադրյալ փաստական հանգամանքները թիվ ԳԴ5/0005/01/14 գործի (ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում) փաստական հանգամանքների հետ (կցվում են): Նշեք նմանությունները և տարբերությունները, ինչպես նաև գնահատեք թե դրանցից որոնք են գործի լուծման համար էականը:

### **ՀԱՐՑ 4**

Արդյոք Բ.Գալստյանի նկատմամբ պատիժ նշանակելիս պետք է կիրառվեն հանցագործությունների համակցության դեպքում պատիժ նշանակելու կանոնները:

### **ՀԱՐՑ 5**

Ընդունենք, թե Դուք որոշել եք կայացնել մեղադրական դատավճիռ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասով և 177-րդ հոդվածի 3-րդ մասով: Սահմանե՛ք

Մովսես Ադամյանի նկատմամբ վերջնական պատիժը՝ նշելով պատժի ժամկետի հաշվարկման սկիզբը: Հիմնավորե՛ք պատասխանը:

### **ՀԱՎԵԼՎԱԾ 1**

#### **ՀՀ վճռաբեկ դատարանի ԳԴ5/0005/01/14 գործով կայացված որոշման փաստական հանգամանքներ**

«(...)

Մեղադրական եզրակացության համաձայն՝ Գրիգոր Վուրդյայի Ղլիջյանը մեղադրվում է այն բանի համար, որ. «(...) նա նախնական համաձայնության գալով Տավուշի մարզի Մովսես գյուղի բնակիչ Սարգիս Հովհաննեսի Անտոնյանի հետ Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղում գտնվող նույն գյուղի բնակիչ Վարդան Բորիսի Բայանի հայրիկին՝ Բորիս Գրիգորի Բայանին պատկանող առանձնատնից գողություն կատարելու մեջ 2014 թվականի հունվարի 16-ի լույս 17-ի գիշերը իրեն պատկանող Վազ 21 Նիվա մակնիշի ավտոմեքենայով Մովսես գյուղից գնացել են Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղում գտնվող Վարդան Բորիսի Բայանի հայրական տուն, կացնի հարվածներով կոտրել առանձնատան մուտքի դռան փականը և, ապօրինի մուտք գործելով առանձնատուն, այնտեղից գողացել (...) [մի շարք իրեր] և գողացված իրերը տեղափոխելով և տեղավորելով առանձնատնից 600 մետր հեռավորության վրա կայանված Նիվա մակնիշի ավտոմեքենայի մեջ հեռացել են Տավուշի մարզի Մովսես գյուղ, որի հետևանքով Վարդան Բորիսի Բայանին պատճառվել է զգալի չափերի հասնող, ընդհանուրը 111.540 ՀՀ դրամ գումարի նյութական վնաս»: